## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Ստորերկրյա ջրերի գոյության մասին մարդիկ գիտեին վաղուց և կարողանում էին գտնել դրանց հնարավոր կուտակումների տեղերը և ջրհորներ փորել: Արտեզյան ջրհորներն էլ հայտնվել են վաղուց: Առաջին անգամ այդպիսի ջրհոր փորել են Ֆրանսիայի Արտուա գավառում 13-րդ դարում: Ջրհորն իրոք շատրվանել է: Այդ շրջանը հայտնի էր իր բարեբեր հողերով և ոռոգման կարիք ուներ: Քանի, որ միջին դարերում Եվրոպայում գիտության և եկեղեցու լեզուն լատիներենն էր ֆրանսիական այդ գավառի անունը հնչում էր որպես Արտեզիա, իսկ հրաշք ջրհորի համբավը, որից ջուրը ինքն իրեն էր դուրս հորդում, արագ տարածվեց և հետագա բոլոր նմանատիպ ջրհորներին այդպես էլ անվանեցին «Արտեզյան»:*